ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ՍՑ-ԱՄ-2018/70

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2018թ. թիվ 03/26-3/9707-18 գրությամբ «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության 25.05.2018թ. թիվ 07/27.5.4/3878-18 և 30.05.2018թ. թիվ 07/27.5.4/3938-18 գրությունների հիման վրա, 31.05.2018թ. թիվ 03/26-3/9707-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ Ընկերությունը համաձայն չէ ներկայացված հիմքերի հետ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Գնանշման հարցմամբ իրականացված «ՀՀ ՏՀՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/8» գնման ընթացակարգի առարկա է համարվել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար՝ համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերումը, որոնք խմբավորված են 10 չափաբաժիններում:

Գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնով, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, առաջին տեղ զբաղեցնող է ճանաչվել բողոք բերող անձ «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն՝ համաձայն գնահատող հանձնաժողովի 14.05.2018թ. արձանագրության:

Այնուհետև, Ընկերությունը գնահատող հանձնաժողովին ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ համաձայն 18.05.2018թ. էլ. ստորագրությամբ հաստատված թիվ 6 հավելվածի և թիվ 6.1 հավելվածի:

Հանձնաժողովի 22.05.2018թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության ներկայացված փաստաթղթերը դիտվել են որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող:

Պատվիրատուի՝ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված գրության համաձայն.

«Գնահատող Մրցույթի 9-րդ չափաբաժնի մեջ ներառված էր ցանցային օպերացիոն համակարգի համակարգչային ծրագրային փաթեթի ձեռքբերում (ESET NOD32 Smart Security Business Edition for 3 years կամ համարժեք, Իսեթ նոդ 32 Սմարթ սեքյուրիթի Բիզնես էդիշն լիցենզիայի երկարաձգում 3 տարվա համար) տվյալ դեպքում Պատվիրատուն պատվիրում է արդեն 3 տարի օգտագործման մեջ ներդրված, 60 օգտատերի և առանձնացված սերվերի վրա տեղադրված և կարգաբերված ESET NOD32

Smart Security Business Edition ծրագրի լիցենզիայի երկարաձգում: Տվյալ չափաբաժնի համար հայտ ներկայացրած 3 մասնակիցներից նվազագույն գին առաջարկած «Սոֆթլայն» ՍՊԸ-ից պահանջվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, որի մեջ նշված էր Kaspersky Endpoint security for Business – Select 50-99 Node 3 year Cross-grade License նկարագրությունը: Առաջնորդվելով համարժեքության սկզբունքով՝ մասնակիցը առաջարկել էր այլ հակավիրուսային ծրագիր, որը չէր համապատասխանում Պատվիրատուի պահանջներին, քանի որ Պատվիրատուի պահանջի մեջ հստակ նշված էր արդեն 60 համակարգչների վրա ներդրված ESET NOD32 Smart Security Business Edition ծրագրի երկարաձգում, իսկ նոր ծրագրի ձեռքբերումը Պատվիրատուից կպահանջի լրացուցիչ աշխատանքներ, այդ թվում 60 համակարգիչներից և սերվերից հին ծրագրի ապատեղադրում և նորի տեղադրում նոր առաջարկված ծրագրի հնարավորությունների ուսումնասիրություն և տեղայնացում:»:

Առաջին հերթին պետք է նշել, որ գրության մեջ Պատվիրատուն նշում է գնման առարկայի այնպիսի բնութագրում, որը տեղ չի գտել հրավերում, որոնք հետևյալն են՝

Պատվիրատուն պատվիրում է արդեն 3 տարի օգտագործման մեջ ներդրված, 60 օգտատերի և առանձնացված սերվերի վրա տեղադրված և կարգաբերված ESET NOD32 Smart Security Business Edition ծրագրի լիցենզիայի երկարաձգում:

Առաջնորդվելով համարժեքության սկզբունքով՝ մասնակիցը առաջարկել էր այլ հակավիրուսային ծրագիր, որը չէր համապատասխանում Պատվիրատուի պահանջներին, քանի որ Պատվիրատուի պահանջի մեջ հստակ նշված էր արդեն 60 համակարգիչների վրա ներդրված ESET NOD32 Smart Security Business Edition ծրագրի երկարաձգում, իսկ նոր ծրագրի ձեռքբերումը Պատվիրատուից կպահանջի լրացուցիչ աշխատանքներ, այդ թվում 60 համակարգիչներից և սերվերից հին ծրագրի ապատեղադրում և նորի տեղադրում նոր առաջարկված ծրագրի հնարավորությունների ուսումնասիրություն և տեղայնացում:

Եթե պատվիրատուն որոշում է ապրանքների համարժեքությունը, ապա պետք է առաջնորդվել այն պայմաններով, որոնք սահմանված են հրավերում, իսկ հրավերում նման պահանջ, որ առաջարկվող ապրանքը պետք է լինի պարտադիր ESET NOD32 Smart

Security արտադրության և 60 համակարգիչների վրա տեղադրված լինելը և այլն, նախատեսված չեն եղել:

Այսպիսով հայտի մերժման հիմնավորումից բխում է, որ մի կողմից գնահատող հանձնաժողովն ընդունում է, որ առաջարկվածը այլ համարժեք ծրագիր է, մյուս կողմից նշում է, որ հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով հրավերում տեղ չգտած գնման առարկայի բնութագիր և նշելով, որ պետք է առաջարկվեր ESET NOD32 Smart Security Business Edition ծրագրի լիցենզիայի երկարաձգում: Սակայն, այդպիսի երկարաձգումը բնականաբար տրամադրվում է միայն այն կազմակերպության կողմից, որը որ թողարկում է ESET NOD32 Smart Security Business Edition ծրագիրը:

Մինչդեռ, գնման առարկայի բնութագիրը սահմանված է եղել հրավերում, որը գնահատող հանձնաժողովն իրավունք չուներ լայն կամ նեղ մեկնաբանության ենթարկեր կամ կատարել այնպիսի մեկնաբանությունը, որը որ հակասում է գնման առարկայի բնութագրին, մասնավորապես, համաձայն հրավերի՝ 9-րդ չափաբաժնով գնման առարկայի նկարագիրը սահմանվել է հետևյալ կերպ.

«Ցանցային օպերացիոն համակարգի համակարգչային ծրագրային փաթեթներ, ESET NOD32 Smart Security Business Edition for 3 years կամ համարժեքը, Իսեթ նոդ 32 Սմարթ սեքյուրիթի Բիզնես էդիշն, լիցենզիայի երկարաձգում 3 տարվա համար», իսկ որպես արտադրող երկիր և կազմակերպություն նշված է եղել «ցանկացած»:

Այսպիսով, հրավերից բխում է, որ Պատվիրատուի կարիքը ոչ միայն սահմանվում է անմիջապես նկարագրվում նշված ESET NOD32 Smart Security Business Edition for 3 years ապրանքը, որի լիցենզիայի երեք տարվա երկարաձգումը տալիս է միայն հենց այդ ապրանքը արտադրող կազմակերպությունը, այլ նաև համարժեք ցանկացած այլ ապրանք:

Ընկերությունն իր կողմից առաջարկված ապրանքը նկարագրել է հետևյալ կերպ.

«Kaspersky Endpoint Security for Business – Select. 50-99 Node 3 year Cross-grade license»:

Այսինքն առաջարկվածն իր ամբողջ բնութագրով համապատասխանում է հրավերով սահմնված գնման առարկայի համարժեքությանը:

Ավելին գնահատող հանձնաժողովն ընդունում է համարժեքությունը, սակայն, ըստ էության, նշում է, որ իր համար ընդունելի միակ տարբերակը այն է, որը հենց թողարկվում է ESET NOD32 Smart Security-ի կողմից, քանի որ այլ ծրագրի առկայությունը առաջացնելու է լրացուցիչ աշխատանքներ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի այն դրույթը, որի համաձայն.

«5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Հրավերով համարժեքության պահանջը պահպանվել է (այսինքն տեքստում օգտագործվում է «համարժեք» տերմինը), սակայն մերժելով ընկերության հայտը նշված հիմնավորմամբ, գնահատող հանձնաժողովը ըստ էության խախտում է թե՛ հրավերի պահանջները, թե Օրենքի նշված դրույթը:

Վատագույն դեպքում, եթե մերժման հիմնավորումները տեսականորեն ճիշտ լինեն, ապա արդեն իսկ առաջանում է խնդիր գնման առարկային նկարագրի այն բնութագրման հետ, որը տրվել է հրավերով, քանի որ «համարժեք» բառը տեսնելով մասնակիցները ողջամտորեն կարող են եզրահանգեն, որ իրավունք ունեն ներկայացնեն նաև այլ համարժեք ապրանք: Արդյունքում, այդ դեպքում էլ գնման առարկայի ոչ ճիշտ նկարագրության արդյունքում խախտվում է Ընկերության իրավունքներն ու օրինական շահերը:

Օրենքի 13-րդ հոդվածի այն դրույթները, որոնց համաձայն.

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»:

Այսպիսով, կամ գնահատող հանձնաժողովը խախտումով մերժել է Ընկերության հայտը, քանի որ վերջինիս կողմից ներկայացված ապրանքի նկարագիրը համարժեք է եղել հրավերում սահմանված ապրանքի նկարագրին (համենայն դեպս գնահատող հանձնաժողովը հակառակը չի հիմնավորել), կամ էլ հրավերում ապրանքի նկարագիրը սահմանվել է օրենքի պահանջների խախտմամբ, որի արդյունքում Ընկերությունը, որպես մասնակից, հնարավորություն չի ունեցել հստակ պատկերացում կազմել ձեռքբերվող ապրանքների վերաբերյալ, արդյունքում իր հայտը մերժվել է՝ իրենից չկախված հանգամանքների ուժով: Հետևաբար, մասնակիցը չպետք է կրի այն բացասական հետևանքները, որոնք առաջացել են գնման առարկայի սխալ բնութագրման արդյունքում:

ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման թիվ մեկ հավելվածով սահմանված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետի համաձայն.

«41. Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով

տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է»:

Նույն կարգի 32-րդ կետի համաձայն.

20) եթե... առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում»:

Այսպիսով, սույն գործով Ընկերության կողմից հրավերով նախատեսված փաստաթուղթ չներկայացնելը կդիտվի որպես պարտավորության խախտում, եթե առկա լինի այն նախապայմանը, որ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցներ նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացներ մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հաշվի առնելով, որ նշված ծանուցումը և թերությունների վերացման առաջարկը տեղի չի ունեցել, իսկ միայն այդ ծանուցումից հետո մասնակցի անգործությունը կդիտվեր գնման պարտավորության խախտում, բոլոր դեպքերում, Ընկերությունը չի կարող համարվել որպես գնման պարտավորությունը խախտած մասնակից՝ դրանից բխող հետևանքներով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերություն գտնում է, որ «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին գնման մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու հիմքերը բացակայում են:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/70 ընթացակարգի շրջանակներում 05.06.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.05.2018թ. թիվ 07/27.5.4/3878-18 և 30.05.2018թ. թիվ 07/27.5.4/3938-18 գրություններով հայտնել է, որ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնման ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մեջ ներառված էր ցանցային օպերացիոն համակարգի համակարգչային ծրագրային փաթեթի ձեռքբերում (ESET NOD32 Smart Security Business Edition for 3 years կամ համարժեք, Իսեթ նոդ 32 Սմարթ սեքյուրիթի Բիզնես էդիշն լիցենզիայի երկարաձգում 3 տարվա համար) տվյալ դեպքում Պատվիրատուն պատվիրում է արդեն 3 տարի օգտագործման մեջ ներդրված, 60 օգտատերի և առանձնացված սերվերի վրա տեղադրված և կարգաբերված ESET NOD32 Smart Security Business Edition ծրագրի լիցենզիայի երկարաձգում: Տվյալ չափաբաժնի համար հայտ ներկայացրած 3 մասնակիցներից նվազագույն գին առաջարկած «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ից պահանջվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, որի մեջ նշված էր Kaspersky Endpoint security for Business-Select 50-99 Node 3 year Cross-grade License նկարագրությունը: Առաջնորդվելով համարժեքության սկզբունքով՝ Ընկերությունն առաջարկել էր այլ հակավիրուսային ծրագիր, որը չէր համապատասխանում Պատվիրատուի պահանջներին, քանի որ Պատվիրատուի պահանջի մեջ հստակ նշված էր արդեն 60 համակարգիչների վրա ներդրված ESET NOD32 Smart Security Business Edition ծրագրի երկարաձգում, իսկ նոր ծրագրի ձեռքբերումը Պատվիրատուից կպահանջի լրացուցիչ աշխատանքներ, այդ թվում 60 համակարգիչներից և սերվերից հին ծրագրի ապատեղադրում և նորի տեղադրում նոր առաջարկված ծրագրի հնարավորությունների ուսումնասիրություն և տեղայնացում:

Պատվիրատուն, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետը, փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/70 ընթացակարգի շրջանակներում 05.06.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ հայտնած դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ Ընկերությունը չի ծանուցվել, այլ Ընկերության հայտը միանգամից մերժվել է:

4. ՍՑ-ԱՄ-2018/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 6-9-րդ չափաբաժինների մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ մասնակիցների կողմից մասնագիտական

փորձառության վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Պատվիրատուի կողմից սահմանված պահանջներին, բացառությամբ 9-րդ չափաբաժնի համար նվազագույն գին առաջարկած «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը, որի կողմից առաջարկվել էր համարժեք այլ ծրագիր, իսկ Պատվիրատուի պահանջում նշված էր արդեն իսկ գործող ESET NOD32 Smart Security Business Edition ծրագրի լիցենզիայի երկարաձգում, այդ իսկ պատճառով երկրորդ տեղ զբաղեցնողից պահանջվել են հրավերով ամրագրված համապատասխան փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում ներկայացվել են:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2018թ. թիվ 03/26-3/9707-18 գրությունը, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության 25.05.2018թ. թիվ 07/27.5.4/3878-18 և 30.05.2018թ. թիվ 07/27.5.4/3938-18 գրությունները, «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով

ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 6-9-րդ չափաբաժինների մասով, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող

հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ մասնակիցների կողմից մասնագիտական փորձառության վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը և տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Պատվիրատուի կողմից սահմանված պահանջներին, բացառությամբ 9-րդ չափաբաժնի համար նվազագույն գին առաջարկած «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը, որի կողմից առաջարկվել էր համարժեք այլ ծրագիր, իսկ Պատվիրատուի պահանջում նշված էր արդեն իսկ գործող ESET NOD32 Smart Security Business Edition ծրագրի լիցենզիայի երկարաձգում, այդ իսկ պատճառով երկրորդ տեղ զբաղեցնողից պահանջվել են հրավերով ամրագրված համապատասխան փաստաթղթերը, որոնք սահմանված ժամկետում ներկայացվել են:

Այսպիսով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում ***հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Ուսումնասիրելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությունը, ինչպես նաև ՍՑ-ԱՄ-2018/70 ընթացակարգի շրջանակներում հրավիրված նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցչի հայտնած դիրքորոշումն, արձանագրում եմ, որ «ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, արձանագրելով անհամապատասխանություն «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ կետի հիման վրա ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում, ***Կարգի 47-րդ կետի համաձայն չի ծանուցել «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ,*** այլ 22.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով ամրագրվել է, որ «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում Պատվիրատուի կողմից սահմանված պահանջներին, այդ իսկ պատճառով երկրորդ տեղ զբաղեցնողից պահանջվել են հրավերով ամրագրված համապատասխան փաստաթղթերը:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ***արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է,*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ միայն չի կիրառել Կարգի 47-րդ կետի պահանջը, այլ նաև առանց «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելու երկրորդ տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել է համապատասխան փաստաթղթեր:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ն «ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԱՊՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն և Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն, արձանագրելով անհամապատաս-

խանություն Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում, Ընկերությանը չի տվել Կարգի 47-րդ կետով նախատեսված՝ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու իրավական հնարավորությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2018թ. թիվ 03/26-3/9707-18 գրությամբ «Սոֆթլայն Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00098239) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ